ԳՐԻԳՈՐ ԿՅՈՒԼՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԵՍ

Գրիգոր Կյուլյան

Հայրենադարձ երկրորդ կարավանով վերադարձա հայրենիք։ Վերջապես կդտնվիմ հայրենի հողին վրա, այն հողին վրա, ուր դարեր շարունակ ապրած ու ստեղծագործած են իմ հայրերը, ուր ամենեն աննշան իրն անգամ ընտանի լեզվով մը կխոսի մեր սրտին հետ։ Տարիներ շարունակ ապրած ու զոյատևած էի այսօրվան երազով։ Այսօրվան հեռանկարներ, որ արտասահմանի մեջ, հակառակ դժվարին առօրյայի մը պարտադրած բոլոր նվաստացումներուն, կանգուն պահած էր մեր միտքն ու հոգին։

Սովետ կենտրոնական կառավարության այն հրամանագիրը, որով արտասահման գտնվող բոլոր հայերը արտոնված էին վերադառնալու Սովետ Հայաստան, անօրինակ խանդավառությամբ մը ոգևորած էր ողջ հայությանը։ Վերջապես դարերով տարահալած հայության փայփայած երազն իրականացավ Հայությունը պիտի վերջապես համախումբ ապրեր իր հայրենի հողին վրա։

Մարդկային լեզվին կերտած բառերով դժվար կարելի է արտահայտել այն անօրինակ հուզումն ու խանդավառությունը, որ էլեկտրական հոսանքի մը պես սրտե ի սիրտ անցնելով տուներեն դուրս եկավ ու պոռթկաց հրապարակներուն վրա իրարահաջորդ հսկայական հավաքույթներու մեջ։

Անձնապես չկրցա անմիջապես հավատալ լուրի ճշտության։ Կրսեի, մի՞թե կարելի է, որ դարերով երազած բան մը, որուն համար զոհված էին մեր ժողովրդին լավագույն զավակները, իրականանար մեկ վայրկյանին մեջ։ Բայց կարելի չէր կասկածել. թերթերը մեծ վերտառություններով հաղորդած էին բարի լուրը. նույնպես տեղական ձայնասփյուռը պաշտոնապես զայն հաղորդած էր ի լուր աշխարհի։ Ուրեմն լուրը ստույգ էր։ Բայց ե՞րբ արդյոք պիտի սկսին արձանագրությունները։ Անհամբերությունը ծայր տված էր արտասահմանի հայության մեջ։ Շատերը կպատրաստվեին լուծարքի ենթարկել իրենց գործերը, ժամ առաջ հայրենադարձ առաջին կարավանով վերադառնալու համար հայրենիք։

Մինիստրների Սովետին կից արտասահմանեն Ներգաղթող Հայերու Ընդունման ու Տեղավորման Կոմիտեին մեկ պաշտոնական նամակը ուղղված Սուրիո և Լիբանանի Ազգային Խորհուրդներուն և Ս. Հայաստանի Բարեկամներու Միության Նախագահին, կուգար իր լրումին հասցնելու Սուրիո և Լիբանանի հայության մեջ ծայր տված խանդավառությունը։ Արձանագրություններ պիտի սկսին շուտով և առաջին կարավանի մեկնումի ամիսն ալ արդեն հայտնված էր։

Երբ արձանագրությունները թվականը հայտարարվեցավ ու օրը հասավ, առաջին օրն իսկ արձանագրվեցաս։ Ամեն ինչ մեկ

օրվա մեջ օտար դարձավ ինձի. կապերս հանկարծ կտրվեցան այն երկրին, ուր ապրած էի վաղ մանկությունս ի վեր ավելի քան քսաներեք տարի. կուզեի ժամ առաջ մեկնիլ Սովետ Հայաստան։ Կրսեիլ վերջապես պիտի մեկնե՞մ այն երկիրը, որ մեր ժողովրդին անունը կկրե, որ մերն է, մերը եղած է ու մերը պիտի մնա հավիտյան։ Հոն ոչ ոք հանդգնի ասել, որ ես օտար եմ, պիտի թոթափեմ անտարբերությունս և իմ լեզուս խոսող ժողովրդին մեջ իմ պատասխանատվություններս ստանձնած պիտի վերագտնեմ կյանքը քաղցրացնող, անոր իմաստ ու նպատակ տվող իմ ունակություններու զարգացումը։ Արդեն առանց սպասելու, որ անունս հայտարարվեր, սկսած էի պատրաստվիլ։ Վերջապես երջանիկ ժամը հասավ։ Երկրորդ կարավանով պիտի մեկնեի հայրենիք։

Հուլիս 10-ին արդեն «Թրանսիլվանիա» նավուն մեջն էի։ Նավը տոնական կերպարանք մը ստացած էր։ Ամեն ոք ուրախ էր, գիտեր, թե ասիկա իր վերջին տեղաշարժը պիտի ըլլար, գաղթականի ցուպը պիտի նետվեր թանգարան, ինչպես նախապես հայտարարած էր Ս. Էջմիածնի պատմիրակ՝ պրոֆ. Աշոտ Աբրահամյանը։

Սուրացող նավի կտրած հեռավորության մեջեն Պեյրութը կամաց կամաց սկսավ անտեսանելի դառնալ։ Նույնպես սկսան կամաց կամաց ուրվանալ Լիբանանի լեռները կորսվելու համար բոլորովին հեռավորության մեջ. երկինքն ու ծովը միացան իրարու. անոնց միջև կսուրար «Թրանսիլվանիա» նավը հայրենաբաղձ զանգվածներու տաք ու բարախուն սիրտը վրան։

Վերջապես հասանք Բաթում։ Նավը դանդաղեցուց իր ընթացքը, նազանքով մոտեցավ քարափին, ուր ծաղկափունջերով սպիտակազգեստ կիներ սկսան թաշկինակներ ճոճել։ Նավը անօրինակ խանդավառությամբ մը թնդաց Սովետ Միության և Սովետ Հայաստանի հիմներու առույգ ու պայծառ շեշտերուն տակ։

Քարափը պատասխանեց իր երգերով։

Ընդունման կայաններու ճակատին, կարմիր ժապավեններու վրա գրված էր. «Բարի գալուստ Սովետական Հայաստան վերադարձող մեր հարազատներին, Սովետական Միության նոր քաղաքացիներին»։ Քարափին վրա կսպասեին Ներգաղթի Կոմիտեի ներկայացուցիչները։ Անոնք նավ բարձրացան և տեղագրվելով՝ բարի գալուստ մաղթեցին։ Հուզիչ էր տեսարանը։ Ներգաղթող հայերու զանգվածը կեռազեռեր նավու կամրջակին վրա, անհամբեր էր ժամ առաջ ցամաք իջնելու։ Պաշտոնական անհրաժեշտ ձևականությունները լրանալեն վերջ, բոլորը իջան ցամաք և անհրաժեշտ բժշկական խնամքը առնելե հետո տեղավորվեցան ընդունման կայաններու մեջ։

Երեք օր Բաթում մնալե հետո, ուր արժանացանք եղբայրական վրաց ժողովրդի ամենեն ջերմ վերաբերմունքին, վերջապես շարժեցանք դեպի Սովետ Հայաստան։ Մեզմե ոմանք իջան Կիրովական, ուրիշներ՝ Լենինական և Հոկտեմբերյան և մյուսներն ալ Երևան։ Ես Երևան իջնողներու մեջ էի։

Գիշերով հասա նոր բնակարանս։ Ընթրիքի համար մեզի բերին ուտելիք։ Հոգնած էի շատ, շուտ մը քնեցա։

Առավոտուն, հաճելի անակնկալը ունեցա զիս գտնելու համապատասխան բնակարանի մը մեջ։ Պարտեզով տուն մըն էր։ Բակում կային ընկույզի ու գեղձի ծառեր։ Փոքր առու մը ջուր կբաժներ ածուներուն։ Տանտերս նույնպես շատ ազնիվ տիկին մըն էր, 36-ին ներգաղթած Հունաստանեն։ Ամուսինը կորսնցուցած էր հայրենական պատերազմին, սակայն հակառակ իր ակներև տխրության, բնավ ընկճված չէր. ընդհակառակը՝ հպարտ էր, որ իր ամուսինը պատվով կատարած էր իր պարտականությունը։ Թեև ան չէր վերադարձած տուն, սակայն հայրենիքը ոտնակոխ չէր եղած թշնամիեն. ու այս էր կարևորը։ Անզուգական կատաղությամբ մը լեցված էր գերմաններուն հանդեպ, որ խանգարած էին իրենց անդորրությունը։ «Հոգ չէ,— կըսեր,— էլի լավ կըլլանք,— քանի որ շահեցանք պատերազմը. մեր երկիրը աշխատանքի երկիր է. բավական է, որ աշխատելու կամքն ունենաս, գործը անպակաս է։ Լավ էք ըրեր, որ եկեր էք. թող գան, բոլորը թող դան. կշատանանք, էլ ավելի լավ կըլլանք, հերիք է, որ օտարներուն երկիրը շենցուցինք։ Հիմի ալ մեր երկիրը շենցնենք. մեր շինածը մերն է, ու մերը պիտի մնա միշտ»։

Ազնիվ տիկինը ամբողջ օրը ընկերացավ ինձի. գիտեր, որ տակավին քաղաքին անծանոթ էի և դժվարություններ պիտի ունենայի փնտրած տեղերս գտնելու համար։

Ինչպես նախապես հանձնարարված էր, առաջին օրն իսկ ներկայացա մեր ռայոնի նախագահին։

Առաջին անգամն էր, որ ներկայությանը կգտնվեի սովետական պաշտոնյայի մը։ Հոս պաշտոնյաներու վերաբերումը բոլորովին տարբեր է։ «Ընկեր» բառը ջնջած է բոլոր հեռավորությունները. հոս պարտադիր

նվիրապետության տեղ, մարդիկ իրարմե կտարբերին միայն իրենց դերով։ Պաշտոնյան ու պարզ քաղաքացին իրարու հանդեպ տոգորված են փոխադարձ հարգանքով և իրավունքի ու պարտականության գիտակցությամբ։ Այս իրողությունը հաստատել մեծագույն ուրախություններես մեկը եղավ։

Նախագահը հարցուց, թե արտասահման ինչ գործով կզբաղվի, համապատասխան գործ մը հայթայթելու համար ինձի այստեղ։ Երբ ըսի, թե գրելու որոշ շնորհ ունեմ և ուսումս թերավարտ է, ինձի հանձնարարեց, որ ուսումս շարունակեմ Պետ. Համալսարանի մեջ։ Հոս բարձրագույն կրթություն ստանալու համար ուսանողները պետութենեն թոշակ կստանան։ Պարապմունքներն բաժանված են երկու հերթի. ուսանողության մեկ մասը առավոտյան կերթա, մյուս մասը՝ կեսօրեն ետք, այնպես որ կարելի է ուսանելով հանդերձ պարապել նաև մեկ ուրիշ գործով։ Այս պարագան նկատի ունենալով՝ հետևեցա նախագահի թելադրության և այժմ կուսանիմ Պետ. Համալսարանի Ֆիլոլոգիական Ֆակուլտետի հայկական բաժնին մեջ։ Միաժամանակ հոդվածներ կպատրաստեմ հանդեսներու համար։

Ամեն օր ավելի կսկսիմ սիրել Երևանը։ Նոր Երևանը, մանավանդ իր արդիական շենքերով, որոնց մեջ հաջողապես օգտագործված են մեր ճարտարապետության տոհմիկ մոտիվները, եվրոպական մեծ քաղաքի մը կերպարանքը ունի։ Դլխավոր հրապարակներուն վրա զետեղված են բարձրախոսներ, որոնք օրն ամբողջ կձայնասփռեն ռադիո-կայանի գեղարվեստական և տեղեկատվական հաղորդումները, երբեմն քաղցր ու ծանոթ երգի մը կամ նվագի մը հնչյուններու տակ դանդաղեցնելով հապշտապ քայլերը անցորդներու։ Ամեն ժամ ականջիդ կհասնեն մայրենի բարբառին հնչյունները, էությունդ լեցնելով հայրենի ու հարազատ մթնոլորտով։

Արդեն մեր ներկա բնակարանները ժամանակավոր են. պետական որոշումով յուրաքանչյուր ներդաղթող ընտանիք պիտի ստանա հող և 30 հազար ռուբլի, սեփական բնակարան կառուցելու համար։ Սեփական տուն ունենալ կնշանակի վերջնականապես դաշնակցել այն հողին հետ, ուր կապրիս և որուն շփումը ամեն օր պիտի զորացնե և իմաստավորե քու կյանքը. որ պետք է շարունակություն մ ըլլա և ոչ վախճան։ Ասիկա մեկը է տակավին սովետական իրավակարգի այն անթիվ բարիքներեն, որոնց համար միայն ու միայն երախտապարտ կրնա ըլլալ սեփական հայրենիքին մեջ վերահաստատված աստանդական հայը։